

**ՀՀ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի շնորհավորական
ուղերձը վերջին դասի կապակցությամբ**
23.05.2013



Մի րեկի շրջանավարտներ

Շնորհավորում եմ ձեզ՝ դպրոցական ուսումնառության ավարտն ազդարարող Վերջին դասի կապակցությամբ:

Տոնական այս օրը անմոռանալի է ձեր համար, քանի որ հրաժեշտ եք տալիս դպրոցական անհոգ առօրյային, ձեզ հարազատ դարձած դպրոցին և մտնում մեծ կյանք: Միաժամանակ հրաժեշտ եք տալիս ձեր ուսուցիչներին, որոնք գիտելիքներով ձեզ հարստացնելուց բացի, ձեր մեջ սերմանել են ազնվություն, սեր, արժանապատիվ ապրելու կամք և հավատ ապագայի նկատմամբ :

Պատվի ու հարգանքի արժանի մանկավարժներ, իմ գովեստի և շնորհակալական խոսքն եմ ուղղում ձեզ, քանզի դուք ձեր նվիրվածությամբ, տքնաջան , հետևողական աշխատանքով ու ծնողական հոգատարությամբ այսօր ձեր հերթական սերունդն եք ուղարկում կյանքի նոր փուլ՝ պատգամելով դառնալու Հայաստանի Հանրապետության արժանավայել քաղաքացիներ:

Կրկին շնորհավորելով մեր շրջանավարտներին Վերջին դասի կապակցությամբ, մաղթում եմ ամենայն բարիք, նվիրական երազանքների իրականացում, լուսավոր ապագա և նորանոր հաջողություններ :

**ԼԱՎԱԳՈՒՅՆ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**